

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝

„Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամ  
**ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝**

1. Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոն
2. Ըմբշամարտի ամբիոն

### ՊԱՇՏՈՆԸ՝

1. Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի “Բռնցքամարտ,, առարկայի ախիստենտ
2. Ըմբշամարտի ամբիոնի դասախոս

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

ա) մասնակցություն կրթական ծրագրերի մշակմանը, կիրառում դրանք՝ ուսումնական պլանին և ժամանակացույցին համապատասխան,

բ) գործնական պարապմունքների, սեմինարների, ամփոփիչ հարցազրույցների, ստուգազրույցների, թեսթավորումների անցկացում,

գ) կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ստուգողական գրավոր աշխատանքների նախապատրաստում, ընդունում և ստուգում,

դ) ուսանողների հետ խորհրդատվությունների անցկացում,

ե) ստուգարքների ընդունում,

զ) ուսանողների ինքնուրույն աշխատանքների պլանավորում և ղեկավարում,

է) ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքների իրականացում,

ը) մասնակցություն ուսանողի արտադրական պրակտիկաների ծրագրերի մշակմանը,

թ) կրթության գիտական բարձր մակարդակ ապահովող գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում և ուսանողների այդ աշխատանքներում ներգրավում,

ժ) ռեկտորի, պրոռեկտորի, ամբիոնի և ղեկանատի հանձնարարությունների կատարում:

### ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Բարձրագույն կրթություն:
- Հայերենի, ռուսերենի և անգլերենի իմացություն:
- Համակարգչային ծրագրերի իմացություն (MS Office, MS Excel):
- Էմոցիոնալ հասունություն, թիմում աշխատելու և լարված իրավիճակներում պրոֆեսիոնալ պահվածք դրսևորելու ունակություն:
- Հաղորդակցման ունակություն:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ՝

- Ինքնակենսագրություն:
- Անձնագիր, սոցիալական քարտ

- Բարձրագույն կրթության մասին հավաստող փաստաթուղթ/եր:
- Զինվորական գրքույկ
- 
- Ռուսերեն, անգլերեն և այլ օտար լեզուների իմացություն

## **ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝**

- Հիմնական աշխատանք, աշխատանքն անմիջապես սկսելու և անորոշ ժամկետով աշխատելու հնարավորություն:
- Մասնագիտական և աշխատանքային առաջխաղացման հնարավորություն:
- Համապատասխան աշխատանքային փորձի առկայությունը կդիտվի որպես առավելություն:

## **ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲ՝**

**04.09.2019թ.**

## **ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝**

**09.09.2019թ.**

Անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները կարող եք ուղարկել ՀՖԿՊԻ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի [kadrer.asipcs@mail.ru](mailto:kadrer.asipcs@mail.ru) էլ-փոստին՝ վերնագիր դաշտում նշելով հաստիքը, որի համար դիմում եք: Փաստաթղթերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

***Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած թեկնածուները:***